

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) տեմպը շարունակում է բարձր մնալ՝ ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով դեպի ՀՀ կապիտալի և մարդկանց ներհոսքով պայմանավորված: Այնուամենայնիվ, վերջին երկու ամիսներին նկատվում է աճի տեմպի որոշակի դանդաղում: Այսպես, սեպտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 14.6%՝ օգոստոսի համեմատ դանդաղելով 3.9 տոկոսային կետով, իսկ հուլիսի համեմատ՝ 4.8 տոկոսային կետով: Կուտակային՝ հունվար-սեպտեմբեր ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշը դեռևս արագացող է, սակայն այն արագանում է ավելի փոքր քայլերով: Մասնավորապես, առաջին ինն ամիսների ՏԱՑ-ը կազմել է 14.1%՝ հունվար-օգոստոսի համեմատ արագանալով ընդամենը 0.2 տոկոսային կետով, այն դեպքում, երբ նախորդ՝ հունվար-օգոստոս ամիսների ՏԱՑ-ը հունվար-հուլիսի համեմատ արագացել էր 0.8 տոկոսային կետով: Իհարկե, սեպտեմբերին տնտեսական ակտիվության դանդաղմանը կարող էր նպաստել նաև ռազմական գործողությունների սրումը, որի ազդեցությունը մի քանի օրով արտահայտվեց նաև փոխարժեքի տատանումներում:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների և առևտրի աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ին կազմել են համապատասխանաբար 5.6 և 5.4 տոկոսային կետ: Ընդ որում՝ առևտրի նպաստումն ունեցել է աճող միտում՝ 5.1-ից դառնալով 5.4 տոկոսային կետ: Էական է եղել նաև արդյունաբերության նպաստումը՝ կազմելով 2.6 տոկոսային կետ:

Գյուղատնտեսության ոլորտում շարունակում է գրանցվել անկում, որի չափը հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 0.7%: Վերջինս 0.1 տոկոսային կետով


հակազդել է ընդհանուր SUՑ-ին: Հարկ է նշել, որ գյուղատնտեսության ոլորտում տարիներ շարունակ գրանցվում է անկում, չնայած կառավարությունը մեծ ծավալով միջոցառումներ է իրականացնում այս ոլորտի զարգացման համար:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2022թ. հունվար-սեպտեմբերին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը¹, %



Արդյունաբերության ոլորտի աճի տեմպը վերջին ամիսներին դրսևորում է տատանողական վարքագիծ: Իրական թողարկման աճը արդյունաբերության

¹ Արդյունաբերության ոլորտի նախորդ ամիսների աճերի ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում հունվար-հունիս, հունվար-հուլիս և հունվար-օգոստոս ամիսների աճերը վերանայվել են դեպի վերև՝ 0.1-ական տոկոսային կետով:

ոլորտում 2022թ. սեպտեմբերին կազմել է 14.8%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ դանդաղելով շուրջ 8.5 տոկոսային կետով: Սակայն, ինչպես նշվել է վերևում, այս ոլորտում առկա է էական բազայի էֆեկտ: Այսպես, օգոստոսին արդյունաբերության աճի կտրուկ արագացումը պայմանավորված էր բազայի էֆեկտով, այսինքն՝ 2021թ. օգոստոսին արդյունաբերության ոլորտում գրանցվել էր շուրջ 5.2% անկում՝ հիմնականում պայմանավորված հանքարդյունաբերության ոլորտում մետաղական հանքանյութերի արտահանման տուրքի ներդրմամբ, որին անպատրաստ լինելով՝ հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունները կրճատել էին իրական թողարկման ծավալները: Հետևաբար, սեպտեմբերին աճի դանդաղումը այս առումով սպասելի էր: Արդյունաբերության կուտակային աճի տեմպը շարունակել է արագանալ՝ հասնելով 10%-ի՝ նախորդ ամսվա 9.3%-ի փոխարեն:


2022թ. հունվար-օգոստոս ամիսների տվյալներով² արդյունաբերության աճը պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 18.9% աճով, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 11.0 տոկոսային կետ (նախորդ ամսվա 9.4-ի համեմատ): Հանքարդյունաբերության ոլորտում անկման տեմպը մեղմվել է՝ հունվար-հուլիսին արձանագրված 9.1%-ից դառնալով 7.9%, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 2.2 տոկոսային կետով:

Արդյունաբերության աճին նպաստել է նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերի աճերը՝ համապատասխանաբար 0.3 և 0.1 տոկոսային կետով:

² 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ծավալների աճի տեմպը աստիճանաբար դանդաղում է: Շինարարության աճն ընթացիկ տարվա սեպտեմբերին կազմել է 14.6%՝ հուլիսի համեմատ դանդաղելով 1.7 տոկոսային կետով: Սակայն, կուտակային՝ հունվար-սեպտեմբեր ամիսների աճի տեմպը փոքր-ինչ արագացել է՝ կազմելով 14.3%:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճի տեմպը կայունացել է բարձր մակարդակում: 2022թ. սեպտեմբերին ծառայությունների աճը կազմել է 26.3%: Հունվար-սեպտեմբեր ամիսների աճը մնացել է նույն՝ 27.1%-ի մակարդակում:

2022թ. հունվար-օգոստոս ամիսների տվյալներով³ ծառայությունների աճն առավելապես պայմանավորված է «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «տեղեկատվություն և կապ» և «տրանսպորտ» ենթաճյուղերի աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 11.4, 5.6 և 4.2 տոկոսային կետ:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի ոլորտի աճի տեմպը նույնպես կայունացել է բարձր մակարդակում: 2022թ. սեպտեմբերին առևտրի աճի տեմպը կազմել է 20.7%՝ օգոստոսի 20.0%-ի համեմատ արագանալով 0.7 տոկոսային կետով: Հունվար-սեպտեմբեր ամիսների առևտրի աճի տեմպը շարունակել է արագանալ՝ կազմելով 14.5%՝ նախորդ ամսվա 13.6%-ի դիմաց:

³ 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ⁴, %




Ապրանքների արտահանման ծավալների աճի տեմպը շարունակում է մեծ տեմպերով արագանալ: 2022թ. սեպտեմբերին արտահանման ծավալն աճել է շուրջ 2.5 անգամ՝ 152.9%-ով: Հունվար-սեպտեմբեր ամիսների արտահանման ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 63.8%-ով՝ հունվար-օգոստոսի համեմատ արագանալով շուրջ 10.7 տոկոսային կետով: Արտահանման նման բարձր տեմպերը կարող են բացատրվել վերարտահանման երևույթով, ինչը ևս կապված է ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետ:

2022թ. հունվար-օգոստոս ամիսների տվյալներով⁵ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման շուրջ 169.4% աճով, որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 16.8 տոկոսային կետ: Արտահանման աճին էական նպաստում են ունեցել նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «պատրաստի սննդի արտադրանք» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի արտահանման աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 11.2, 8.0 և 4.4 տոկոսային կետ:

⁴ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար-օգոստոս ամիսների արտահանման աճի ցուցանիշը բարելավվել է 0.2 տոկոսային կետով:

⁵ 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ⁶, %



Ներմուծման ծավալների աճի տեմպը շարունակում է մնալ բարձր մակարդակում: 2022թ. սեպտեմբերին ներմուծման ծավալը նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ աճել է 82.2%-ով, որը թեև բավական բարձր ցուցանիշ է, սակայն նախորդ ամսվա համեմատ ցածր է շուրջ 24.2 տոկոսային կետով: Հարկ է նշել, որ նախորդ տարվա օգոստոսին գրանցվել էր ներմուծման ծավալների նվազում, ինչի նկատմամբ էլ ընթացիկ տարվա օգոստոսի աճը կտրուկ արագացել է, իսկ սեպտեմբերին՝ դանդաղել (քանի որ նախորդ տարվա սեպտեմբերին ներմուծման աճի տեմպը վերականգնվել է): Հունվար-սեպտեմբեր ամիսների աճի ցուցանիշն էականորեն արագացել է՝ հասնելով 61.6%-ի՝ նախորդ ամսվա 58.4%-ի դիմաց:

Ներմուծման աճին նպաստել են գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը (հունվար-օգոստոս ամիսների տվյալներով⁷), որոնցից առավել նշանակալի է եղել «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի ներմուծումը, որոնք ընդհանուր ներմուծմանն ունեցել են համապատասխանաբար 11.7, 7.9, 6.8 և 6.4 տոկոսային կետ դրական նպաստում:

⁶ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար-օգոստոս ամիսների ներմուծման աճի ցուցանիշը բարելավվել է 0.2 տոկոսային կետով:


⁷ 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2022թ. հունվար-օգոստոսին անվանական աշխատավարձի աճի տեմպն արագացել է⁸, սակայն գնաճի պայմաններում իրական աշխատավարձի աճը մնացել է ցածր մակարդակում: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-օգոստոս ամիսներին նախորդ տարվա համեմատ աճել է 12.9%-ով՝ կազմելով 223,971.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 4.7%-ով և կազմել 180,291.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 15.4%-ով՝ կազմելով 243,158.0 դրամ:

Միևնույն ժամանակ, 2022թ. հունվար-օգոստոսին սպառողական գների միջին մակարդակն աճել է 8.4%-ով, ինչի պայմաններում իրական աշխատավարձն աճել է 4.2%-ով, իսկ պետական հատվածում՝ նվազել է շուրջ 3.4%-ով:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2021-2022թթ. հունվար-օգոստոսին, %



⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, սեպտեմբերի տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)




ՀՀ դրամը էականորեն արժևորված է ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ: ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022թ. հունվար-սեպտեմբերին արժևորվել է շուրջ 14.1%-ով, իսկ Եվրոյի նկատմամբ՝ 27.7%-ով: Ռ-Դ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպը վերջին ամիսներին դանդաղել է՝

կապված ՌԴ ռուբլու դիրքերի ամրապնդման հետ, և հունվար-սեպտեմբերին կազմել է 5.9%:

ՀՀ դրամի արժևորման տեմպը օգոստոս-սեպտեմբեր ամիսներին որոշակիորեն կայունացել է 406-409 դրամի միջակայքում: Սեպտեմբերին ԿԲ-ն շարունակել է բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 10%, սակայն նույն ժամանակահատվածում ՀՀ սահմանին Ադրբեջանի կողմից հրահրված ռազմական գործողությունների արդյունքում դրամը որոշակիորեն արժեզրկվել է, որը կարճ ժամանակահատվածում գրեթե չեզոքացել է: Վերջինս ցույց է տալիս, որ ներկա տնտեսական իրավիճակը բավական փխրուն է, և լարվածության ու անորոշության առկայության դեպքում հնարավոր են էական տնտեսական փոփոխություններ:

Գծապատկեր 11. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի անվանական փոխարժեքի օրական միտումները և ՀՀ ԿԲ շուկայական գործառնությունների տոկոսադրույքը 2022թ. ընթացքում



5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁹


5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը փոքր-ինչ նվազել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2022թ. հունվար-սեպտեմբերին աճել են 24.9%-ով՝ նախորդ ամսվա 26.1%-ի փոխարեն: Հարկային եկամուտների աճը կազմել է 24.2%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.0 տոկոսային կետով: Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները 2022թ.

⁹ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

հունվար-սեպտեմբեր ամիսներին աճել են շուրջ 40.7%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ շուրջ 2.2 անգամ՝ շուրջ 6.9 մլրդ դրամով:

Գծապատկեր 12. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի (աճը՝ 22.2%), շահութահարկի (աճը՝ 46.4%) և պետական տուրքի (աճը՝ շուրջ 2.6 անգամ) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկերի աճին կազմել են համապատասխանաբար 7.5, 5.4 և 4.9 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճի տեմպի դանդաղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մետաղական հանքանյութերի արտահանման տուրքը սեպտեմբերից հանվել է, հետևաբար դրա նպաստումն ընդհանուր հարկային եկամուտներին կտրուկ նվազել է:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2021թ.		2022թ.	
	հունվար-սեպտեմբեր		հունվար-սեպտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	11.9	11.9	24.2	24.2
ԱԱՀ	14.3	4.7	22.2	7.5
Շահութահարկ	7.3	0.9	46.4	5.4
Եկամտային հարկ	2.7	0.8	9.6	2.7
Ակցիզային հարկ	-9.1	-0.7	12.0	0.8
Շրջանառության հարկ	14.6	0.3	27.8	0.6

Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	17.3	0.7	48.8	2.1
Մաքսատուրք	33.4	1.5	-34.6	-1.9
Սոցիալական վճար	82.0	1.4	47.1	1.3
Այլ հարկային եկամուտներ	84.1	1.5	18.1	0.5
Պետական տուրք	52.7	1.2	163.0	4.9

5.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճը շարունակում է էականորեն զիջել եկամուտների աճին: 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են շուրջ 7.4%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.2 տոկոսային կետով: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճերով: Ընթացիկ ծախսերի աճի տեմպը կազմել է 4.2%, իսկ կապիտալ ծախսերն աճել են 38.5%-ով՝ կազմելով 173.9 մլրդ դրամ: Ընդ որում, ընթացիկ ծախսերի աճի տեմպն արագացել է նախորդ ամսվա համեմատ՝ շուրջ 1.4 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերինը՝ դանդաղել 3.0 տոկոսային կետով: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի ծավալը զգալիորեն բարձր է նախորդ տարվա մակարդակից, այնուամենայնիվ այն դեռևս էականորեն ցածր է առաջին ինն ամիսների պլանային ցուցանիշից՝ 250.4 մլրդ դրամից, և կազմում է այդ պլանի ընդամենը 69.4%-ը:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեն շարունակում է մնալ հավելուրդային: 2022թ. հունվար-սեպտեմբերին ձևավորվել է բյուջեի հավելուրդ շուրջ 51.4 մլրդ դրամի չափով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորվել էր շուրջ 147.5 մլրդ դրամ պակասուրդ, իսկ 2022թ. պետական բյուջեի ինն ամսվա պլանով նախատեսված էր 211.4 մլրդ դրամի պակասուրդ: Այսինքն՝ ստացվում է, որ բյուջեի կատարումը պլանից շեղվել է շուրջ 262.8 մլրդ դրամով: Իհարկե, ներկա պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությունը կարող է արդարացված լինել, սակայն հարկաբյուջետային զսպումը չպետք է իրականացվի կապիտալ ծախսերի թերակատարման հաշվին:


5.4. Պետական պարտք

2022թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,931.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ աճելով 9.9%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես աճել է՝ կազմելով 9,397.9 մլն ԱՄՆ դոլար և 2021թ. նույն ամսվա համեմատ ավելանալով 9.7%-ով: Պարտքի աճը հիմնականում պայմանավորված է եղել ներքին պարտքի շուրջ 59.5% աճով, իսկ արտաքին պարտքը նվազել է շուրջ 9.3%-ով: Տարեսկզբի համեմատ կառավարության պարտքն աճել է 7.2%-ով կամ 630.0 մլն ԱՄՆ դոլարով՝ պայմանավորված ներքին պարտքի աճով:

Վերջին ամիսներին պետական պարտատոմսերի տոկոսադրույքների աճի միտումը չի շարունակվել, սակայն նախորդ տարվա համեմատ դրանք մնացել են բարձր մակարդակում: Կարճաժամկետ տոկոսադրույքները սեպտեմբերին կազմել են 10.7%, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը՝ 11.1%, որոնք

Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ավելի են համապատասխանաբար 2.3 և 1.7 տոկոսային կետով:


Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը, որոշակի դանդաղումից հետո, նորից սկսել է արագանալ: Սեպտեմբերին գնաճի տեմպը կազմել է 9.9%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.8 տոկոսային կետով: Երկու ամիս դանդաղելուց հետո գնաճը նորից սկսել է արագանալ, ընդ որում բավական կտրուկ տեմպով: Այս պայմաններում ՀՀ ԿԲ-ն սեպտեմբերին բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը ևս 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 10%:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը, %



2022թ. սեպտեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճի տեմպը կտրուկ արագացել է: 2022թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 16.3%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 5.6 տոկոսային կետով: Ավանդների աճն ապահովվել է և՛ ռեզիդենտների, և՛ ոչ ռեզիդենտների ավանդների ծավալների աճով՝ համապատասխանաբար 13.1%-ով և 26.8%-ով:

Գծապատկեր 18. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին շուրջ 6.2 տոկոսային կետով դրական նպաստում են ունեցել ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները, էական նպաստում են ունեցել նաև տնային տնտեսություններից և ձեռնարկություններից ներգրավված ավանդները՝ համապատասխանաբար 4.6 և 4.5 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


2022թ. սեպտեմբերին վարկերի աճի տեմպը փոքր-ինչ արագացել է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2022 թվականի սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 4.1%-ով՝ օգոստոսի 3.2% աճի դիմաց:

Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները աճել են շուրջ 0.9%-ով և ընդհանուր վարկերի աճին ունեցել են 0.1 տոկոսային կետ նպաստում: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները աճել են 4.3%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել են 4.1 տոկոսային կետ դրական նպաստում:

Գծապատկեր 20. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վարկերի շուրջ 12.7% աճով, մինչդեռ իրավաբանական անձանց վարկերը շարունակում են նվազել:

Գծապատկեր 21. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ




Տնտեսության ճյուղերի¹⁰ շարքում վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիփոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 32.9%, իսկ

¹⁰ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

նպաստման չափը՝ 5.2 տոկոսային կետ: Շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճի տեմպը պահպանվել է գրեթե նույն մակարդակում՝ կազմելով շուրջ 8.6%, իսկ նպաստման չափը կազմել է 0.4 տոկոսային կետ:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 22. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը¹¹



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի ծավալների աճը կտրուկ դանդաղելուց հետո վերականգնվել է: 2022թ. օգոստոսին, բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 292.1 մլն ԱՄՆ դոլար:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով՝ դեպի ՀՀ կապիտալի և մարդկանց ներհոսքով պայմանավորված, ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշի (SUS-ի) տեմպը շարունակում է բարձր մնալ: Այնուամենայնիվ, վերջին երկու ամիսներին նկատվում է աճի տեմպի որոշակի դանդաղում: Այսպես, սեպտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 14.6%՝ օգոստոսի համեմատ դանդաղելով 3.9 տոկոսային կետով, իսկ հուլիսի համեմատ՝ 4.8 տոկոսային կետով:

¹¹ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումների տարբերությունը ԱՄՆ դոլարով:
2022թ. սեպտեմբերի ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

2. Գնաճի տեմպը նախորդ ամիսներին որոշակիորեն դանդաղելուց հետո կրկին սկսել է արագանալ: 12-ամսյա գնաճի տեմպը սեպտեմբերին արագացել է՝ հասնելով 9.9%-ի: Կենտրոնական բանկն արդեն իսկ սեպտեմբերին բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 10%: Ի դեպ, ընթացիկ տարվա ընթացքում ԿԲ-ն մի քանի անգամ բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, սակայն գնաճի տեմպը շարունակել է արագանալ: Հետևաբար, անհրաժեշտ է նաև կիրառել տնտեսության կարգավորման այլ գործիքներ՝ գնաճի տեմպը նվազեցնելու համար:

3. Դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների ծավալները շարունակում են բարձր տեմպերով աճել: Դա նշանակում է, որ ՀՀ տնտեսությունը շարունակում է մտնել մեծ քանակությամբ կապիտալ՝ հանգեցնելով փոխարժեքի հետագա արժևորմանը: Այս պայմաններում, կառավարությունը և ԿԲ-ն պետք է միջոցներ ձեռնարկեն կապիտալի հոսքերի կառավարման համար (օրինակ՝ ինտերվենցիաների իրականացում կամ այլ գործիքներ, որոնք միտված լինեն շուկայում ավելցուկային կապիտալի ստերիլիզացմանը), որպեսզի դրանց բացասական ազդեցությունները տնտեսության վրա հնարավորինս չեզոքացվեն: Սակայն, դրամական ներհոսքի մեծ ծավալների հետ միաժամանակ նկատվում է ՏԱՑ-ի դանդաղում, ինչը նույնպես պետք է լինի մակրոտնտեսական քաղաքականություն մշակողների ուշադրության կենտրոնում:

4. ՀՀ արտաքին առևտուրը աճում է աննախադեպ բարձր տեմպերով: Ե՛վ արտահանման, և՛ ներմուծման ծավալները վերջին ամիսներին էականորեն գերազանցում են նախորդ տարվա նույն ամիսների ցուցանիշներին: Այստեղ առկա է վերարտահանման երևույթ՝ կապված ՌԴ նկատմամբ կիրառվող սանկցիաների և դրանց ստեղծած հնարավորությունների հետ: Դա լրացուցիչ հիմնավորվում է այն փաստերով, որ ներքին տնտեսության հիմնական շարժիչ ուժերը այդ չափով չեն աճում: Հետևաբար, կառավարությունը մի կողմից՝ պետք է քայլեր ձեռնարկի գերշահույթ ստացող տնտեսավարողներին առավել արդյունավետ հարկելու ուղղությամբ, մյուս կողմից՝ պետք է գրավիչ պայմաններ ստեղծի ՀՀ տեղափոխված քիզնեսի և անհատների համար:

5. Գյուղատնտեսության ոլորտում շարունակվում է գրանցվել անկում: 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով՝ գյուղատնտեսության ոլորտի անկումը կազմել է 0.7%: Վերջին տարիների ընթացքում գյուղատնտեսության ոլորտում գրանցվում է շարունակական անկում, մինչդեռ այդ տարիներին կառավարության կողմից ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերը և ռեսուրսները ավելացվում են: Հետևաբար, հարց է առաջանում կառավարության կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետության և թիրախայնության վերաբերյալ:

6. Պետական բյուջեի կատարումն էականորեն շեղվել է պլանից:

Պետական բյուջեի փաստացի պակասուրդը շուրջ 262.8 մլրդ դրամով շեղվել է պլանից, որը պայմանավորված է ինչպես եկամուտների ավել հավաքագրմամբ, այնպես էլ ծախսերի թերակատարմամբ: Իհարկե, տնտեսական բարձր աճի պայմաններում հարկաբյուջետային զսպող քաղաքականության իրականացումը տեղին է, սակայն դա չպետք է իրականացվի կապիտալ ծախսերի թերակատարման միջոցով: Մինչդեռ նշված շեղման էական մասը՝ 76.5 մլրդ դրամը պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարմամբ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: